Տպագրված է 3 օրինակից

Օրինակ ---

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի
25/01/2011թ թիվ 5-Լ որոշմամբ

Փոփոխված է 25/03/2011թ թիվ 39-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»
ԻԱՄ խորհրդի նախագահ

---------- Անդրանիկ Նորեկյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է
(վերջին փոփոխությունը գրանցված է)
ՀՀ կենտրոնական բանկում

«------» ---------- 2011թ
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

---------- Արթուր Ջավադյան

ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-023

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ԿՏՐՈՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ)

1. «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» իրավաբանական անձանց միության անդամ ապահովագրական ընկերությունները (այսուհետ՝ ընկերություն) իրենց մասնաճյուղերին, գործակալներին տրամադրում են իրենց մոտ առկա հերթական համարների (համարների միջակայքի) ԱՊՊԱ կտրոններ:

2. Ընկերությունները յուրաքանչյուր ԱՊՊԱ պայմանագրի հետ տրամադրում են տվյալ պահին իրենց մոտ առկա հերթական համարի (համարների) ԱՊՊԱ կտրոնը (կտրոնները):

3. Ընկերությունները իրենց գործակալների հետ կնքվող գործակալական պայմանագրերում (արդեն կնքված գործակալական պայմանագրերին ի լրումն կնքվող լրացուցիչ համաձայնագրերում) անմիջականորեն կամ հղում տալով ընկերության սահմանած համապատասխան կանոններին պետք է սահմանեն գործակալների պարտավորությունը՝ յուրաքանչյուր ԱՊՊԱ պայմանագրի հետ տրամադրել տվյալ պահին իրենց մոտ առկա հերթական համարի (համարների) ԱՊՊԱ կտրոնը (կտրոնները), ինչպես նաև գործուն կառուցակարգեր նախատեսեն ապահովագրական գործակալների կողմից սույն կետով նախատեսված պարտականության կատարումը հսկելու համար և խախտումներ հայտնաբերելու դեպքում կիրառեն խիստ պատասխանատվության միջոցներ:

1)

2)

Սույն կանոնների 3-րդ կետն ուժի մեջ է մտնում սույն կանոններն ուժի մեջ մտնելուն հաջորդող 10-րդ աշխատանքային օրը: